



Հունիսի 5, 2018:

Մեդիա Կոնտակտ

Անունը -Նարինե Մկրտչյան
BSA- ի տեղական խորհրդատու
Հայաստանում
Հեռ: (+374) 77453155, 91/022727

Էլ. հասցե: narinemkrt@live.com

BSA- ի հետազոտությունը ցույց է տալիս, որ Ծրագրային ապահովման արդյունավետ կառավարումը կարող է բարձրացնել անվտանգությունը և դրական ազդեցություն ունենալ եկամուտների վրա:

Հայաստան, Երևան - Մայիսի 30, 2018թ. Կիրեռիանցագործությունների ռիսկը նվազեցնելու և իրենց եկամտաբերությունը բարձրացնելու համար, Հայաստանում ընկերությունները պետք է ստուգեն իրենց SS ցանցերում օգտագործվող ծրագրային ապահովումը և վերացնեն չարտոնագրված ծրագրակազմը: Սա բխում է «2018թ-ի Ծրագրային ապահովման շուկայի հետազոտության տարեկան հաշվետվությունից» /BSA Global Software Survey-2018/, որը հրապարակվել է այսօր «Բի Էս Էյ» Համակարգչային ծրագրեր արտադրողների ասոցիացիա/ կազմակերպության կողմից: Այսօր հրապարակված հարցման արդյունքում պարզվել է, որ Հայաստանում օգտագործվող համակարգիչներում առկա ծրագրային ապահովման (համակարգչային ծրագրերի) 85%-ը պատշաճ լիցենզավորված չեն: Այս տվյալը 2016-ին «Բի Էս Էյ»-ի հրապարակված հետազոտության հաշվետվության տվյալների համեմատ (86% ից մինչև 85 %) 1 նիշով նվազում է արձանագրում:

Ամբողջ աշխարհում կազմակերպություններն օգտագործում են ծրագրային ապահովումը իրենց բիզնես գործառնությունների կատարելագործման , շահույթները բարձրացնելու , նոր շուկաներ գրավելու և մրցակցային առավելություններ ձեռք բերելու նպատակով: Սակայն, ինչպես տեղեկացնում են տեղեկատվական տեխնոլոգիաների ղեկավարները և ինչպես հավաստվում է հետազոտության մեջ մանրամասն նկարագրված վերլուծությամբ, եթե ծրագրային ապահովումը արտոնագրված չէ, ապա այն օգտագործող կազմակերպությունները հաճախակի

վտանգում են իրնեց անվտանգությունը, ինչն էլ հանգեցնում է սպառնալիքների ավելացմանը:

Որպեսզի ավելի լավ հասկանալ չարտոնագրված ծրագրային ապահովման օգտագործման հետևանքները, «Բի Էս ԷՅ»-ը հրապարակել է «Ծրագրային ապահովման շուկայի 2018թ-ի ընդհանուր հետազոտության հաշվետվությունը»: Ծրագրային ապահովման կառավարում՝ անվտանգության երաշխիքներ, բիզնես հնարավորություններ: Հետազոտության մեջ նկարագրված են ավելի քան 110 երկրներում և տարածաշրջաններում անհատական համակարգիչների վրա տեղակայված չարտոնագրված ծրագրերի ծավալն ու արժեքը և ներառում է մոտ 23,000 օգտագործողների՝ աշխատողների, սպառողների և տեղեկատվական տեխնոլոգիաների ղեկավարների հետ իրականացված հարցումների պատասխաններ:

«Կազմակերպությունները ամբողջ աշխարհում կորցնում են տնտեսական օգուտներ և առավելություններ, որոնք կապված են տեղեկատվական անվտանգության հետ և որոնք ապահովվում են ծրագրային ապահովման արդյունավետ կառավարմամբ»,- ասել է «Բի Էս Էյ» կազմակերպության նախագահ և գլխավոր տնօրեն Վիկտորյա Էսպինելը:

«Ընկերությունները պետք է իրականացնեն ծրագրային ապահովման ակտիվների կառավարման գործընթացներ (SAM, Software Asset Management), որպեսզի կարողանան լիովին վերահսկել իրենց կողմից օգտագործվող ծրագրային ապահովման համակարգը: Մա, իր հերթին, կազմակերպություններին թույլ կտա նվազեցնել կիբեր հարձակումների սպառնալիքները, ինչը հանգեցնում է բիզնեսի համար լուրջ հետևանքների և դրական ազդեցություն կունենա վերջիններիս շահույթների վրա »:

Հետազոտության հիմնական արդյունքները ներառում են.

- Չարտոնագրված ծրագրային ապահովման օգտագործումը չնայած որ փոքր-ինչ նվազել է, բայց այն դեռ նախկինի նման շարունակում է տարածված մնալ: Չարտոնագրված ծրագրակազմը դեռևս ամբողջ աշխարհում օգտագործվում է անհանգստացնող տեմպերով: Անհատական համակարգիչների վրա տեղադրված չարտոնագրված ծրագրային ապահովումը կազմում է 37 %՝ 2016 թ-ի տվյալների համեմատ միայն 2 կետով անկում է արձանագրված:
- Տեղեկատվական տեխնոլոգիաների տնօրենների հաղորդմամբ, չարտոնագրված ծրագրային ապահովման օգտագործումը շարունակում է մնալ առավել ռիսկային և թանկ: Վիրուսակիր ծրագրերի օգտագործմամբ ընկերությունները տարեկան մոտ մոտ 359 միլիարդ դոլարի վնաս են կրում: Տեղեկատվական տեխնոլոգիաների տնօրենները հայտնում են, որ տվյալների անօրինական հասանելիության և անվտանգության այլ

չարամիտ սպառնալիքներն, որոնք իրենց մեջ պարունակում են վնասակիր ծրագրերը, հանդիսանում է թիվ 1 պատճառը, որը խոչընդոտում է կորպորատիվ ցանցերի լիցենզավորված ծրագրերի լիարժեք փոխանցման ապահովմանը:

- Ծրագրային ապահովման արտոնագրման պահանջներին համապատասխանելը այժմ ոչ միայն պարտադիր պահանջ է ընկերության տեղեկատվական անվտանգության ապահովման համար, այլև այն դրականորեն ազդում է ընկերության տնտեսական գործունեության վրա: Ծրագրային կառավարումը բարելավելու գործնական քայլեր ձեռնարկող ընկերությունները կկարողանան հաշվարկել մինչև 11% շահույթի աճ:
- Կազմակերպությունները կարող են գործնական քայլեր ձեռնարկել ծրագրային կառավարման բարելավման համար: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ կազմակերպությունները ծախսերի մասով կարող են տարեկան մինչև 30% խնայողություններ ապահովեն ծրագրային ապահովման համար, եթե արդյունավետ ներդնեն ծրագրային ակտիվների կառավարման (SAM)և ծրագրային արտոնագրերի օպտիմալացման ծրագրերը:

Խորացված վերլուծության միջոցով հետազոտությունը ցույց է տալիս, որ ընկերությունները կարող են կիրառել ուժեղ և արդյունավետ միջոցներ, ներառյալ SAM ծրագրերը, բարելավելու ծրագրային ապահովման կառավարումը , դրանով իսկ ավելացնելով իրենց շահույթները, նվազեցնելով անվտանգության ռիսկերը և աճող հնարավորությունները: Հետազոտության արդյունքների ուսումնասիրության համար՝ ներառյալ երկրի հատուկ տվյալների ցուցանիշները , կարող եք այցելելք www.bsa.org/globalstudy հղումով:

Բի Էս Էյ- ի մասին

BSA | Համակարգչային ծրագրեր արտադրողների ասոցիացիան՝ (www.bsa.org) համաշխարհային ծրագրային ապահովման ոլորտում, համագործակցում է կառավարությունների և ներկայացված է միջազգային շուկայում: Նրա անդամները հանդիսանում են լավագույն նորարարական ընկերություններն աշխարհում, որոնք ստեղծելով ծրագրային լուծումներ, խթանում են տնտեսությունը և բարելավում ժամանակակից կյանքը: «Բի Էս ԷՅ»ը ներկայացված է ինչպես Վաշինգտոնում տեղակայված կենտրոնական գրասենյակի միջոցով, այնպես էլ՝ աշխարհի ավելի քան 60 երկրներում:

Կազմակերպությունը նպաստում է օրինական ծրագրերի օգտագործմանը և պաշտպանում է հանրային քաղաքականություններն, որոնք խթանում են տեղեկատվական տեխնոլոգիաների նորացմանը: Նպաստում է թվային տնտեսության աճին: Հետևեք կազմակերպությանը հետևյալ հղմամբ: [@BSANews](https://twitter.com/BSANews).